կոպոսէ փլէպանուշ վերակեցու և հոգաբարց քահանայ ևն.։ Նաև գրիցես տեղոյս իշխանացն որ և գլխաւոր իշխանացն որ աստ Պիրօվ յորջորջեն, և է ազնիւ անձ ի մէջ բնաւից... թէպէտ տէր մինաս խնկանոսեանն ունի ընդ իս յոյժ սէր և ոչ կամի զելն իմ աստի, և ընդ նմա նաև իշխանք և ժողովուրդք տեղոյս...։ Նոյն պղնձեա տախտակի պատկերաց վասն որ գրեալ էի, գիտասցէ տէրդ իմ, որպէս որ ունիմք ի վանքն զոմանս փրվածու երկաթէ գրչով գրեալ և փորեալ, զանազան սրբոց պատկերս զորս ի թօրգօլայի մէջն անցուցեալ տպի մրով...։ Տեղս յոյժ ահալիցք են բնաւք ազգ և ազինք ի կողմանէ պատերազմին որ ընդ աքաղաղին, և զամենայն ինչք ախք և կարասիք կրեցին բնաւք ի հաստատ բերդօրայքն, միայն մերկք մնացեալք են բնաւքն։ (Հ. Մանուէլ Խուչկարևաև առ Մխ. Աբբայ, յամի 1734 մայիսի 26, ի պաշուալովու գրնցեալ որ այժմ կոչեցաւ էլիսափերափոլի)։

## ՂԸ.

Աստ այլևայլ լուր բօթալից բազումք գոն մինչև ցայժմ, և ոչ մնաց մի տուն զորս ոչ փախուցանէին զկահս և զկարասիս իւրեանց, և միայն ես խելայեղս սրտապնդեալ միշտ հրամայէի տանն տէր ովանէսին ասելով, թէ ոչ կամիմ իջուցանել և ոչ մի կլայեկ տէրսեստանն ի տանէ իւրեանց, և նոքա հնազանդեալ խօսիցս ոչ կալան և ոչինչ, և այս եղև հիացումն և զարմացումն բազմաց, և բազումք սրտրջացեալք ափսոսան, թէ զիա՞րդ մեք յիմարացեալք այսքան դրամք մխեալով առաքեցաք զմեր թանկ հագուստն, և զապրանս որ ոչ գիտեմք զստոյգն պատերազմի ի վերայ մեր։ Եւ մինչև ցայժմ ոչ մնաց ոք ոչ ի մէջ կոօֆից, ոչ ի մէջ նեմէշ կոչեցեալ ազնիւ անձանց որք ոչ մուծին զաղէկս, և զագէստս իւրեանց ի ամրագոյն բերդօրայս, և խաժամուխք տեսանելով թէ իշխանք այսպէս առնել կամեցան, համարելով թէ ուրեմն գիտիցեն զբօդալից իմն լուր, և ինքեանք ևս սկսան կրել զախս իւրեանց ի բերդօրայս։ Եւ տեղիս սեռն տեսանելով զարարքս զայս յոյժ սրտմտեալ է, և ասեն թէ կամի արտաքս ելանել մին քանի բերդօրայ շրջագայելով, զի յորդորեսցէ մանաւանդ զգիւղացիս որպէս զի պակասելումն նոցին, ոչ անկցի թանկութիւն ցորենոյ և գինւոյ և այլ ամենայն ինչ պտղոց, զի նոքա են աշխատաւորք, հնձողք և կթողք ևն.։ (Հ. Մանուէլ Խուչկարևաև առ Մխ. Աբբայ, յամիսն 1734 յուլիսի 5. ի պաշուալով էլիսաբէթի)։

## ՂԲ.

Ի յունիսի 30 Քրիստոֆոլոն ի կարգէն յիսուսեան առ Աստուած փոխեցաւ, և հայոց կուսանքն և աշխարհականք արք և կանայք զմեծ կոծ արարին, և լացին կականօք այնքան, մինչ զի դուռն եկեղեցւոյն փակեցեալ եղև, զի մի ձայնք նոցա ի յականջս այլազգեաց հասանիցին։ Եւ ցաւ սորա փոխարկեցեալ իցէ նոյնոյ կարգին։ (Հ. Պ[ողոս] Վ. առ Մ. Աբբայ, յամիսն 1734 յուլիսի 7. ի ստամպոլ)։

## ՂԳ.

Ցանցելում շաբաթոջ եպիսկոպոսն դրոշմ տուաւ լաթինացւոց երեխայից և հայոց, և ի պատճառս մերայնոց շատ դժուարութիւն կրեցի մինչև ուսուցի զոմանս իրս հարկաւորս...։ Ջերեվան առեալ են կարմիր գտակն և փախտան խանն։ Եւ եթէ միջնորդք ոչ կարիցեն զերկոսին թագաւորն հաշտեցուցանել, գիտասջիր, զի մեծագոյն արիւնահեղութիւն լինելոց է յերկուստ կողմանց. նաև ութնհազար զինուորօք էվճէնիոն գնալոց է իտալեայ, և բրինձ ալեքսանդր, նաև այլ ոմն իշխան ի յըռէնեոյ ընդդէմ ֆռանսիզին։ Մոսկոֆն և կարմիր գտակն յամենայնէ սրտէ կապակցեալք են ընդ կայսերն։ Մոսկովի զօրքն ի լէհաստան կարի յոյժ նուաճեցուցեալ են զապստամբն լեհացւոց։ Մոսկոֆի ռէճինան զեպիսկոպոսունսն, նա և զմեծամեծսն հրաւիրեալ է ի թագաւորանիստ քաղաքն իւր ասելով, թէ գոն ոմանք իրք եկեղեցականք ուղղելիք, եկայք ուղղեսցուք զնոսա։ (Ե[ղիա] Վ. առ Մխ. Աբբայ, յամիսն 1735. [Պելկրատ])։